ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

<<ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

31.07.2017 թ.

ժ. 15:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Ա. Ջանջուղազյանը,
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Եղիազարյանը /գնահատող/,
	Գ. Գևորգյանը /գնահատող/,
	Ֆ. Սարգսյանը /բացող/,
	Ա. Գրիգորյանը /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1. Գնումների բողոքարկման խորհրդի 24.07.2017 թ. թիվ ԳԲԽ-Է-2017/19 որոշման քննարկման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնումների բողոքարկման խորհրդի 24.07.2017 թ. թիվ ԳԲԽ-Է-2017/19 որոշման հրապարակման մասին գրությունը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն ստացել է 28.07.2017 թ-ին.

1.2 Հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 24.07.2017 թ. թիվ ԳԲԽ-Է-2017/19 որոշումն, ինչպես նաև վերոհիշյալ որոշման կատարման իրավապարտադիր լինելու հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- Դադարեցնել <<ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/6>> ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2017թ. նիստի արձանագրությամբ <<ԵՐԱՆՈՍՇԻՆ>> ՍՊԸ և <<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը, ինչպես նաև 21.06.2017թ. <<ԵՐԱՆՈՍՇԻՆ>> ՍՊԸ և <<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ կոնսորցիումի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.3 Հիմք ընդունելով 1.2 կետով ընդունված որոշումը՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 26.05.2017թ. նիստի արձանագրության 2.1 կետով <<ԵՐԱՆՈՍՇԻՆ>> ՍՊԸ և <<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ կոնսորցիումին երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչելու մասին, 06.06.2017 թ. թիվ 2 կետով՝ ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին՝ ինչպես նաև թիվ 3 կետով՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական նկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու ու առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին ընդունված որոշումները.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.4 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

- Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ-ին,

- Երկրորդ տեղ գրաղեցնող ճանաչել <<Թիվ 1Շինվարչություն>> ԲԲԸ-ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և հաջորդ տեղ գրաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի առաջին և երկրորդ տեղ գրաղեցրած մասնակիցների մասին, սահմանված կարգով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.2 Առաջին տեղ գրաղեցրած մասնակցին՝ <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ-ին ծանուցել, որ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին ընկերության համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 8-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Գ. Գևորգյան

Ֆ. Սարգսյան

Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան